

Նախագահ Սերժ Սարգսյանը Բյուրականում Ներկա Ե գտնվել „Յեռանկարներ,, փառատոնի ակադեմիայի բացմանը

04.04.2015

Նախագահ Սերժ Սարգսյանը և տիկին Ռիտա Սարգսյանը ապրիլի 3-ին այցելել են Արագածոտնի մարզ: Մարզպետ Սարգիս Սահակյանի ուղեկցությամբ նրանք Բյուրականում ներկա են գտնվել «Յեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի ակադեմիայի բացմանը: Այն միակն է տարածաշրջանում և կոչված է ծառայելու որպես միջազգային դասի մենակատարներ պատրաստող երաժշտական կրթօջախ, որտեղ մեր օրերի ամենապահանջված երաժիշտները և մշակույթի ոլորտի ազդեցիկ գործիչները կանցկացնեն վարպետության դասեր և համերգներ՝ պայմաններ ստեղծելով հայ տաղանդաշատ ու հեռանկարային երիտասարդ երաժիշտների միջազգային առաջխաղացման համար:

Նախածեռնության հեղինակները ակադեմիայի բացմանը մասնակցող հյուրերին պարզաբանել են կրթօջախի կառուցման վայրի ընտրության գաղափարը, նշելով, որ նման ակադեմիաներ սովորաբար հիմնվում են մայրաքաղաքից դուրս՝ ապահովելու համար քաղաքի եռուզեռից հեռու ստեղծագործական պայմաններ: Պատասխանատուների խոսքով, հեղինակավոր երաժշտական փառատոնին կից ակադեմիաների հիմնումը նորություն չէ, այլ ամբողջ աշխարհում ընդունված երևույթ: Հայտնի են Վերբիում, Էդինբուրգում, Քրոնբերգում, Բրյուսելում և այլուր գործող ակադեմիաները, որոնց բոլորին միավորում է երիտասարդ սերնդի երաժիշտ-կատարողներին բարձրակարգ երաժշտական մասնագիտական հմտությունների փոխանցման գաղափարը՝ հատուկ միջավայրում: Բյուրականը՝ որպես ակադեմիայի հիմնման վայր է ընտրվել մի քանի պատճառներով. այն ակադեմիական բնակավայր է, որտեղ 1947թ-ից գործում է աստղաֆիզիկական աստղադիտարանը: Այստեղ են գտնվում պատմության հոգևոր արժեք ներկայացնող մի շարք կոթողներ, ինչպիսիք են Սք. Հովհաննես բազիլիկ եկեղեցին, Դղերի վանքը, Կաթողիկոսական Նստավայրը, Արտավազիկ եկեղեցին, հեռու չեն Ամբերդը, ֆիզիկայի ինստիտուտը և այլ գիտական ու կրթական կարևորություն ունեցող վայրեր:

Առաջին միջոցառումը, որ տեղի կունենա Բյուրականի ակադեմիայում, ս.թ. ապրիլի 11-13-ը Եվրոպական փառատոնային ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպվող փառատոնային կառավարման եռօրյա ինտենսիվ դասընթացն է՝ «Փառատոնային ընթերցումներ» խորագրով: Դասախոսությունները նպատակ ունեն հայ մասնակիցներին ներկայացնել փառատոնների կարևորությունը հասարակության մշակութային կյանքում և արվեստի զարգացման գործում:

Դասընթացի շրջանակներում Հայաստան ժամանած փառատոնային կառավարման առաջատար մասնագետները կծանոթացնեն փառատոնների կառավարման համակարգին, նորագույն մոտեցումներին, ինչպես նաև կկիսվեն իրենց աշխատանքային հմտություններով և միջազգային փորձով:

Սերժ Սարգսյանը ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, «Բյուրական» արվեստի ակադեմիայի հիմնադիր-նախագահ, պրոֆեսոր Ստեփան Ռոստոմյանի, դաշնակահար Եվգենի Կիսինի, տարածքային ու տեղական իշխանությունների ներկայացուցիչների և այլ պատասխանատուների ուղեկցությամբ շրջայց է կատարել նորակառույց ակադեմիայում, ծանոթացել գործունեության համար ստեղծված պայմաններին, ծրագրերին, այնուհետև ունկնդրել է տաղանդաշատ պատանի երաժիշտների մասնակցությամբ տեղի ունեցած համերգը: Այդ պատանիներին փառատոնն արդեն ընգրկել է միջազգային մեծ բեմերում կայանալիք համերգների ծրագրում: Շնորհակալական խոսքեր են հնչել ակադեմիայի բարերարների հասցեին, որոնց թվում են՝ «Փյունիկ» հիմնադրամը, աշխարհահռչակ դաշնակահար Եվգենի Կիսինը:

Ակադեմիայի բացման առիթով ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պարգևատրվել է «Երևանյան հեռանկարներ» երաժշտական միջազգային փառատոնի 15-ամյա հռեբյանի կապակցությամբ թողարկված ոսկե մեդալով՝ փառատոնի կայացման գործում մեծ ներդրման և աջակցության համար:

Սերժ Սարգսյանն այցելել է նաև նորաբաց կառույցի հարևանությամբ գտնվող խորհրդային տարներին կառուցված Բյուրականի մշակույթի տուն, որն ապագայում կգործի իբրև շուրջ 800 մարդու համար նախատեսված մեծ համերգասրահ: